52. ՊՅՈՒԼՊՅՈՒԼԻՆ ՀԵՔԻԱԹԸ

Կա էղե, չկա էղե մե թագավորմ կա էղե։ Ադ թագավորը մե ժամըմ շինե կը էղե։ Շինե պրծնի կը օրա, արարած աշխարհք գուքա ադ ժամին մայիլ կը մնա։ Մե օրմա մե էխտիարմ գուքա կաշե, կաշե, վերշն ալ թագավորին կըսե կը թե.

— Ժամդ լավ է, հըմը մե բանմ պակաս է, թ'ակյար մե պյուլպյուլմ բերես ժամիդ մեշը պահես, ժամիդ ալ ժամ չի հասնի։ Թագավորը ադ օր դիմանա, կանչե կը իրեն իրեք աղոցը ու կըսե կը թե.

— Ձեզնեն վերն օր մե պյուլպյուլմ փերե ինձի, ես անոր կուտամ թախտս ու աս մատնիս։ Գուղեք, գնացեք, պտրտվեք, բալքիմ գտնիք։

Իրեք մանչն ալ պատրաստութեն տեսնին, գելլեն կէրթան կը։ Կէրթա՜ն, կէրթա՜ն, խյուլասա իրեքի բաժնվող մե ճամփամ ըռաստ գուքա։ Ասոնք աստեղ կուտեն, խմեն կը, ետքնա քարիմ տակ մեկմեկ նշան դնեն կը ու իրարու խոսք կուտան, օր ետ դառնալներուն անպատճառ գան ադ տեղը, նշանները տեսնին ու թ'ակյար մեկին նշանը փասոտել[1] է, անոր իմտըտին հասնին։

Ասոնք գելլեն անմեքը մե ճամփամ բռնեն կէրթան։ Պզտի մանչը կէրթա՜, կէրթա՜, շատ ու քիչն աստված գիտե, կէրթա հասնի կը մե քաղաքմ։ Կէրթա ադ տեղաց թագավորին ղոնաղ։ Թագավո-

[1] Ժանգոտել (Ս. Բ.)։

ը ադ մանչուն շատ հավնի կը, ադոր կըսե կը թե.— Արի իմ մեկուճար աղջիկս առ, ինձեն ետև ա թագավոր էղի։

Աս մանչը ռազի չի ըլլի ու կըսե կը թե, ինքը էկել է մե պյուլպյուլմ տանելու։ Դառնա աղաչանք կէնե թագավորին թե.— Թե օր քովդ քիչմ խաթր ունիմ, մե պյուլպյուլմ գտի ինձի հըմար։

Եփ օր պյուլպյուլը շինեն բերեն կը, թագավորը կըսե աս մանչուն թե.— Մտի աս պյուլպյուլին մեջը, թևերը շարժե ու թռի քնը ֆիլան թագավորին տանը փանճարան կայնե, անոնք քեզի նես կառնեն ու իրենց պյուլպյուլին քովը պահեն կը, անոր առնելն ու փախչիլն ալ քու բանդ է։

Տղան ասոր ըսածին պես մտնի կը պյուլպյուլին մեջը ու թռչի, կէրթա, կայնի կը մեկալ թագավորին աղջըկան փանճարան։

Ադ թագավորին աղջիկն ա շատ ըռնտիկ գըլլի, անպես ըռընտիկ, օր արևին կըսե կը. «Եվ, թե չը ես գելլեմ»։ Աղջիկը պյուլպյուլին տեսնի կը թե չը խնդըլուն չի գիտնա, թե ինչ էնե։ Կանչե կը հորը, պյուլպյուլը նես կառնեն, շաքրով հաց կուտեցնեն, մեկալ պյուլպյուլին քովը դնեն կը։

Գիշեր օր գըլլի, բիտտուն քնին կը, թագավորին աղջիկն ա մենակ ադ օդին օրթան ցկե կը տեղը ու պառկի կը։ Եփօր քունը վրա կանցնի, աս մանչը ուսուլով գելլե կը պյուլպյուլին մեջեն ու գուքա աս աղջըկան թուշը կըսկուծըմ պագնե կը ու վազզե կէրթա պյուլպյուլին մեջը մտնի կը։

Աղջիկը վեր թռչի, ճվա կը, խալայեզները մեկալ օդեցեն գուքան, կրակը վառել կուտա, ու վախվըխելով քյոշեստանը կաչե օր իրեն պագնողին գտնի, ինչքան պտտի կը, տեսնի կ'օր մարգ չի էրևա, նորեն պառկի քնի կը։

Մանչը նորեն գելլե ու առաջվընեն ավելի կսկուծըմ պագնե կը ու փախչի մտնի կը պյուլպյուլին մեջը։ Աղջիկը աս անգամիս օր ավարա տեղը ման գուքա օր գտնի իրեն պագնողին, ալ քունը չի տանի, սուտ քուն գըլլի, ինչ է պագնողին բռնե։

Քիչըմ կանցնի, տղան ալի չի բաքլայե, չունքի համը բերանն է մնացե, գելլե պյուլպյուլին միջեն, կէրթա աղջըկա քովը, չոքի կ'օր պագնե, աղջիկը թևերը ցկե ճիտը, փաթթվի կը։ Թեզըմ կրակ կէնե օր տեսնի, թե վեվ է բռնածը, կաչե օր, ինչ աշե, մե ջեյրանըմ, բոյով բուսով աղազադամ։

Մանչը փաթթվի կը անոր ու կըսե թե.— Դու իմս ես, ես քեզի համար եմ էկե։

Ագոնք քիչմ սիրվին կը, կաչեն օր լուսը բացվելու վրա է, խոսք

կէնե օր ելլեն փախչին։ Մանչը կըսե կը թե.— Արի էրկուսս ա իմ պյուպյուվիս մեջը նստինք, քու պյուպյուվդ ա առնինք ձեռքերս ու թռչինք, էրթանք մեր տունը։

— Լավ գըլլի,—կըսե աղջիկը,—հըմը, հարըս անպես մե հավքըմ ունի օր, ակյար անոր ըսե թե. «Ֆիլանը փախել է, քընը գտիր» անիկ հոգին կրակը կը ցկե, ուր է ուր չէ զարնե, սրպանե, գտնի կը։ Ադոր չարան ալ գիտե՞ս ինչ է, ան է օր, հարըս մե քանիմ հատ աղլուղ ունի, թ'ակյար աղլուղը ձեռքդ ունենաս, հավքին գալած վախտը ձեռացդ փռես, հավքը գուքա աղլուղին վրա գիշնի, քեղի վնաս չի տա։ Ինչ ալ օր ըսես, ան սահաթուն կատարե կը։ Էրեկ ադ աղլուղներեն մե հատմ տվեց իմ խալայեղիս օր վլա, ըլլի օր հըլը քովը ըլլի, արի ադ խալայեղին ա հետներս տանինք։

Աղջիկը կէրթա խալայեղին կանչե, փորփրե, դիմանա կ'օր աղլուղը տահա քովն է, ադոր բարքնա կէնե կը, իրեքով նստին կը պյուպյուվին մեջը, մեկալ պյուպյուվին ա կառնեն իրենց քովն ու ծեքը չը ծեքած թռչին կը։

Ապպախտան թագավորն օր դիմանա թե, նա իրեն աղջիկը կա, նա պյուպյուվները, ան սահաթուն արունը գլոխը կը զարնե, կանչե կը իրեն ան մե հավքը, ու կըսե կը թե.— Ուր է ուր չէ, իմ աղջիկս պիտի բռնես։

Ղուշը զանատները բանա կո՞ւ թռչի կը։ Թռչի՞ թռչի՞ խյուլասա անոնց հասնի կ'ու, վրաները քշե կը թե չէ, անոնք թեգրմ աղլուղը բանան կը։ Ղուշին հերսը գիշնի, գուքա աղլուղին վրա կայնի կը։ Մանչը քաշե կը ղամեն ու զարնե ղուշին գլոխը ցկե կը։ Ղուշին գլոխն օր ցկե կը, նորեն ճամփա գելլեն, հասնին կը նշան գրած տեղը։ Քարը վերցընեն, տակը կաշեն՝ տեսնին կ'օր միշակ ախպոր նշանը անպես փաստել է, օր դու պրծար։ Մանչը աղջըկան կըսե կը թե.— Ախպարս նեղության մեջ է, գուքաս անոր իմտատ հասնինք։

Աղջիկը ռազի գըլլի.— էրթանք,— կըսե,— ուր օր գուզես։

Ադոնք նստին կը պյուպյուվին մեջը, հարց ու փորց էնելով կէրթան։ Կէրթա՛ն, կէրթա՛ն շատ գեղեր, քաղքներ կանցնին, մեմա։ մե քաղքիմ մեջ դիմանան օր, ադիկ ունեցած չունեցածը բըռիկի տվել, փչացուցել է ու հիմի ա դափու-դարտակ մինչի բուկը պարտքի մեջ խեղտված մե աղայիմ ճորտ է դարձել։

Աստին գըյնին, անտին գըյնին, խյուլասա ադոր գտնին կը, բիտտուն պարտքերը կուտան, պարտքատերերեն կազատեն ու կառնեն հետները ետ կը դառնան։

Ադ ախպոր աչքը չի վերցնե, օր պզտի ախպարը տանի պյուլ-պյուլը, մեմա ադ աղչկան աչքն խմե կը։

Ճամբան մե հորիմ քով նստին կը օրա, ադ մեծ ախպարը կը-սե կը մեկալին թե.— Ծկակել եմ, մեմ արի կախվի աս հորը պու-տըմ ջուր հանե խմենք։

Պզտի ախպարը անկաջ կէնե ու մեծ ախպոր փտած չվանով հո-րը կը կախվի։ Ախպարն է, զարնե կոռե կը չվանը ու ախպորը ցկե կը հորը։ Պզտի ախպարը գուլա, կազաչե օր իրեն հանե, ախպարը հեչ տերը չի ըլլի ու զոռով կառնե աղչկան, թոչի կէրթա տուն, պյուլպյուլը կուտա հորը։ Հարը շատ կուրախնա, պյուլպյուլը կախե կը ժամը ու պատրաստութեն տեսնի կը, օր իրեն մանչուն պսակե բերած աղչկանը հետ։

Աղչիկը էկած օրեն նա կուտե, նա կը խոսի, մոթըվորած նստի կը վար։ Հարսնեց օրն օր մոտենա կը, տղին մարը գուքա աղչկանը հարցնե կը թե.— Ինչի՞ ադպես խեղճցեր, կուրկուրի ձագ ես կտռել։

Աղչիկը ալ չի համբիրե, բանա կը բերանն ու էղած չէղածը պատմե կը ու գուլա։

Թագավորն օր ադ դիմանա, աղչկան ասկյար կուտա, օր էր-թա բերե պզտի տղին։ Աղչիկը ասկըրին գլոխը անցած կէրթա գրտ-նի կը հորը, նես կաչե, տեսնի կը օր իրեն անուշ յարը մե կոխքին ընկած հոգուն հետ է։ Ալ չի համբիրե սեր ու սեվտայեն, սրտին կրակեն վար կը կախվի, հանե կը անոր դուս, ձեռքը քսե փթած տեղերը կը սաղցնե, կառնե գուքա տուն։

Հարը օխտն օր, օխտը գիշեր հարսնիք կէնե, աս էրկուսին պսակե կը, ետև օրթանչա տղին ծեծե, տնեն վռնտե կ'ու իրեն թախտն ա կուտա պզտրկին։

Անոնք հասան իրենց մուրազին, դուք ա հասնիք ձեր մուրազին։